

եւ անձնակալ սք նշանացս: Ձեռամբ ամե-
նամեղ եւ փցուն գրչացս Ղազար վղմի,
առաջնորդի սք ուխտիս եւ նորին հարա-
զատի Յովս վարպետի (s!) եւ Յոհն աշա-
կերտի:

Վասն որո յերես անկեալ աղաչեմք
զամենն, որք լուսաւորիք սովաւ, կար-
գալով կամ զաղափար առնելով, յիշեցէք
ի քն զստացաւդ տառիս զարժանապատիւ
կուսակրօն քհնյն զՄաթթի հանգերձ ամ ա-
րեան մերձաւորաւք: Եւ զնորաբողոք զեղ-
բօրորդի նորին զՈւմեկն, զվայելող սք ա-
ւետարանիս: Ընդ նոսրն եւ զսննդակից
զքս հոգւոյ հարազատք նորին զսրբասէր
քհնյն զԳր տր Յովս եւ զմեծ Յովս եւ զԳր
Սրբոս եւ զԳրբոս, եւ զայլ միաբանեալսն
սիրով ընդ նմա, յիշեցէք ի քն: Այլ եւ
զճիւնն անհեղ զիշխանն իշխանց զպր Ձալա-
պի եւ զպր . . . (!) եւ զճաղկլ զաւելց նոցա
եղիցի յիշատակ մասին անհուսթե:

Դարձեալ ի ծուռնկս անկեալ աղաչեմք մայ-
րամած գիւմք զքնաւ դասքդ պաշտաւնէից
յիշեցէք ի քն զթարմատար գրչս զՂ. զՂ. վղմի,
եւ զՅովս վարպետ եւ զտր կիրկս կազմող
եւ զանպիտանս յամի զՅոհն, որ յոյժ աշ-
խտեցաք ի գիր եւ ի ծաղիկ եւ ի համա-
բարբառսն եւ զճնօղսն մեր ամ արեան մեր-
ձաւորք ասելով ի խորոց սրտէ, թէ տր ան-
ողորմ յնյ: Այլ եւ սղանալաց եւ խոշրե-
գրոյս՝ անմեղադիր լերուք, զի այս էր կար
մեր ի Ժմ ծերեւ: Որով յիշողացդ եւ մեղ
յուսողացս առ հսթի ողորմեցի քն ամ մեր
եւ նմա փառք յւննս ամէն:

6.

Ձեռ. Էջմ. N 3759,

Սեւանից բերուած՝ N 2, Տօմական.

Վերջւմ՝ 937. Փառք եղակի . . . եւայլն (!):

940. Ձոր տեսեալ զայսպիսի դանձն անձա-
յին եւ պայծառ լուսով լցեալ անձային շնոր-
հաւքն զարդարեալ փրկութի կենաց եւ լու-
սաւորիչ հոգւոց ննջեցելոց: Արդ այսքան

եւ այսու ամիւ լցեալ ի բարի յարմատոց
յառաջ եկեալ սք վարդապետն Դանիէլ եկն
ի սք ուխտս Հայոց Թառ եւ միաբան եղեւ
սք Ամենափրկչիս եւ այլ սրբութեցս: Եւ
մեծաւ յուսով եւ փափաքմամբ սիրով ձեռն
էարկ զսք եւ երկնաման եւ փառաւոր կա-
թօղիկէ եկեղեցիս: Եւ վերստին կրկին
զարդարեաց եւ սալեց եւ նորոգեաց | |

941. Որ եւ տարածեցաւ համբաւ սորայ
ընդ ամ ծագս տիեզերաց: Ձի սայ է ճա-
նապարհ կենաց եւ դուռն արքայութե:
Սա է քաւիչ մեղաւորաց եւ առողջութի
հոգւոց: Սա է ժառանկ արքայութե, յոյս
եւ ապաւէն ամ հաւատացեալ ննջեցելոց:
Սա է պարիսպ ամրութե եւ փրկիչ ամ հա-
ւատացեալ քրիստոնէից: Արդ եւ ես անար-
ժան եւ սուտ անուն արեղայ՝ Ստեփաննոս,
որ ի վաղ ժամանակաց կայր բնական գութ
եւ սէր եւ եղբայրութի որ եւ մի վարպետի
աշակերտեալ էինք (s!), ի տղայութենէ հա-
սակից (s!) եւ պնակիտս: Եւ սա խնդրեաց
զսք տառս եւ զգանձն անձային եւ ես ան-
արժանս հարկեցայ եւ գրեցի զսք գիրքս՝
զգանձն անձային վն սիրոյ նորա. տկար ան-
ձամբ խմով ի գառն եւ ի խաւար ժամանա-
կի, որ ի մեղացն եկն ի վերայ մեր ի յա-
նաւրինաց եւ յայլակրաւից (հորոգած շէշա-
գրեւ) եւ ի չար բռնաւորաց, ի խանութե
Ջահանշահին եւ որդւոյ Ուսուֆին, որ մտաւ
ի խորասան եւ Է. տարի զաշխարհս սահուն
եւ երերուն պահեաց ի հարկապահանջու-
թիւն, ի տառապանս եւ ի չարչարանս այն-
պէս, եւ հայր զորդիս ուրանային: Ի հայ-
րապետութե ան Գրիգորի, որ նորոգեաց (s!)
զսք էջմիածինն, եւ բազում եւ մեծաւ ջա-
նիւ զարդարեաց եւ նորոգեաց եւ հաստա-
տեց զհաւատս քրիստոնէութե եւ պայծա-
ռացոյց եւ լուսաւորեաց զսք զեկեղեցիս.
զի սա է մայր ամ եկեղեցեաց եւ զաւա-
նութի ուղղափառ հաւատոց: Ի թվիս հա-
յոց. ՋԺԳ. ի սք յաթոռս Ամենափրկչիս,
ի սք ուխտս Հայոց Թառս. գրեցաւ զսք (s!)
տառս ձեռամբ Ստեփաննոս անարժան արե-
ղայի ի սէր Դանիէլ վրդմի: Արդ՝ որք աւ-
գտիք ի սմանէ կարգալով կամ աւերնակե-
լով, յիշեալք զստացաւդ սորա զվղմի եւ
զճնաւդսն իւր, զհայրն՝ ան կարապետ քհնյ
եւ զմայրն զՀամաւոր եւ զտր ներսէն ա-
րեղա, եւ զեղբայրսն զՌստակէս, զՎրդա-
նէս, զՅուսիկ. եւ զԳրիգորէս եւ զՍահակ,

(1) Մի բառի տեղ բաց է թողուած, բայց յետոյ
տարբեր գրչով եւ թանարով գրուած, որ չի կար-
գացուած:

(2) Պատմական բովանդակութիւնից զուրկ լինե-
լու պատճառով, չենք տալիս այդ մասն աշատեղ: